մտյան պատի արձանագրությունները խաչաղարդերով թողնում ենք այժմ, վորպես ուշ ժամանակի գործ, յուր տեղում յիշելու (տ. պատկ. 44)։

Պոռշի աշխարհաշինության յերկրորդ մեծ ապացույցը Թանահատի կամ Թանատի վանքն է Վայոց ձորում, Սրկղունից կամ Բաշքյանդի վտակի և Արկազու Սուրբ խաչի մեջ (պատկ. 45)։ Թուրք գյուղացիներից, ինչպես և Հայերից, վոր միայն ԺԹ. դարի ռուս—պարսկական պատերազմից հետո են այստեղ հաստատվել, Ղարավանք կոչված։ Ալիշան այդպիսի կոչումը կապում է վանքի քարերի գույնի հետ, բայց մեզ թվում է այդ սխալ. հավանորեն, Ղարավանքը վոչ այլ ինչ է, բայց յեթե Քարեվանք կոչման լոկ աղավաղություն. ինքն էլ քիչ հետո գյուղն անվանում է «Քարէվանք», չհիշելով, թե վորտեղից գիտե գյուղի այդպիսի անվանակոչությունը։ Մի ճաշոցի հիշատակարան՝ գրված 1335 թվին, ավելի ևս պարզում է այս խնդիրը. «Ես պարոն Հայրուս, որ շինեցի զաղօթանոցն մեր սուրբ մենաստանացս զՔարի վանուցս, զԹանահատի վանուցս և զսուրբ Կաթուղիկէիս . . .» (տ. Հավել, Բ. 14)։ Որբելյանի ցուցմունքներով «Քարէվանք» հին տեղը՝ Ցեղեգյաց և Արփա գետերի անջրպետ՝ Թյաքյաղյոնդյուրան կոչված սարի բարձունքներումն եր *, և նայում եր դեպի Ցեղեգյաց ձորն ու գետը, իսկ պարոն Հայրուտի հիշատակարանից յերևում է, վոր յերեք վանքերն էլ իրար մոտ պիտի լինեին և, գուցե, մի ամբողջություն եյին կազմում։ ԺԳ. դարում և հետո բուն Ցեղեգյաց ձորը Որբելյանների սեպհականություն եր, իսկ Թանահատի վանքը, վոր հիշված սարի հարավային փեշերին է, Պոռշյանց. ուրեմն, Որբելյանի հիշած հին ճգնարան Քարեվանքը * նույն չե ԺԳ. դարու Քարեվանքի հետ։

Թանահատի վանքի հնագույն հիշատակությունն ունինք Որբելյանի մեջ. նույնանուն մի վանք էլ գտնվում եր բուն Սյունիքում. մեր Թանահատը Վայոց ձորումն եր և հիմնված ութերորդ դարից առաջ։ Այստեղ



Պոռշի վիմափոր տաճարի բեմի ճակատը. Պատկեր 39

են ամփոփված Սյունյաց Ստեփանոս նշանավոր յեպիսկոպոսի և մատենագրի նշխարները, վոր նահատակվեցավ այստեղից վոչ շատ հեռու Մոզն ավանում *։ Սակայն հնագույն հիշատակներ ԺԳ. դարից վաղ չեն մնացել։

Ներկա վանքի շինության մասին պատմիչները վոչինչ չեն հիշում, բացի մի ակնարկությունից Որբելյանի մեջ, վոր հետո կտեսնենք։ Այդ պակասը լրացնում են արձանագրությունները. շինության արձանագրությունը գտնվում է արևմտյան դրան աջ կողմը, տարաբաղդաբար քարեր ընկած լինելու պատճառով պակասավոր է (տես Հավելված Ա. 18)։ Այս արձանագրության հիման վրա մենք պետք է կարողանայինք

* Ղուկ. հրատ 259։

* Անդ. գլ. ԼԱ. ԼԴ. ԿԲ.։